



Վրաստանի հայ նկարիչների միության նախագահ Մերուժան Շահումյանը բարձր գնահատելով Էդվարդ Բադոյանի ստեղծագործական շնորհը, դրանք անվանեց դրամատիզմով և ողբերգականությամբ հագեցած լուսանկարներ:

Պատանի լուսանկարչի աշխատասիրությունը, պահը ճիշտ նկատելու և որսալու հմտությունը, հետաքրքիր համադրությամբ բարդ կոմպոզիցիաներ ստեղծելու ունակությունը բարձր գնահատեցին բանախոսներ՝ Վրաստանի նախագահի խորհրդական Վան Բալբուրյանը, ռեժիսոր-նկարիչ Միքայել Գրիգորյանը, Վրաստանի մտավորականների միության Թբիլիսի կազմակերպության նախագահ Ենոք Թադևոսյանը, Սրբապատկերագործ-ասեղնագործող Միխեիլ Մճեղիշվիլին, լուսանկարչի դասուհի Մարինա Արությունովան և ուրիշներ:

Վիրահայոց Թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանն իր օրհնությունը բաշխելով 15-ամյա Էդվարդ Բադոյանին և բոլոր ներկաներին, մաղթեց պատանուն աշխատասիրությամբ շարունակել զարգացնել իր ունակությունները և մոտ լինել ազգին ու եկեղեցուն:

Վրաստանի հայ նկարիչների միությանը և ծնողներին ուղղված շնորհակալության խոսքում Էդվարդ Բադոյանը երախտագիտությամբ նշեց, որ իր երազանքն էր ցուցահանդեսը կազմակերպել Վիրահայոց Թեմում՝ Հավլաբարի Սբ. Էջմիածին եկեղեցուն կից:

Էդվարդ Բադոյանի լուսանկարների անհատական ցուցահանդեսը կշարունակվի մինչև հուլիսի մեկը: